ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №22Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ ապրիլի 11-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			
Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ավդալյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025թ. ապրիլի 11-ի №22-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ ԱՊՐԻԼԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ ապրիլի 11-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 12-ի թիվ 76-Լ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

7) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:

8) Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու հարցը քննարկելու մասին:

9) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի փողոցները համարակալելու մասին:

10) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			
Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Լոռի Բերդ համայնքում սկսել 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2. Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեում հատկացնել 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել քաղաքաշինության և սպորտի ոլորտները՝ որպես առաջնահերթություն:
7. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025-2027թթ. ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել համայնքի ավագանուն:

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			
Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Լենա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ
համայնքի ավագանու
2025թ.-ի ապրիլի 11-ի թիվ 24-Ա

ԱՂՅՈՒՍԱԿ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

N	Առաջարկի անվանումը	ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ						Տեղափոխվել է հանրային քննարկումների և լսումների փուլ
		Իրականացվելու է համայնքի տարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը	Հանդիսանում է նոր առաջարկություն[1]	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել	Համապատասխանում է ավագանու սահմանած առաջնահերթություններին	
1		Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
2								
3								

(այդ թվում՝ համայնքի տվյալ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ առաջարկ-նախագծերի համընկնման բացառման) և ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը:

[1] Առաջարկը իրականացման փուլում չէ, ընդգրկված չէ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չի իրականացվելու այլ կազմակերպությունների կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝.սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո համայնքի բյուջեում կատարել որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:
3. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 17-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			

Սերոբյան Անի Սամվելի			
Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

Հավելված
Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 11-ի
թիվ 25-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինի սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) Քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեության աջակցումը,

2) Զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված համայնքում փաստացի բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնության տրամադրումը,

3) Ոչ հիմնական շինություններում և ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին աջակցության տրամադրումը,

4) Արհեստների, ժողովրդական ստեղծագործությունների և գեղարվեստական ինքնագործունեության զարգացումը,

5) Համայնքի տարածքում գործող հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների, երիտասարդական կենտրոնների աջակցումը,

6) Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների աջակցումը,

7) Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական, մարդկային, զբոսաշրջային-ռեկրեցիոն ռեսուրսների մասին տեղեկատվության հաշվառումը, դասակարգումը, տարածումը և հանրահռչակումը,

8) Տոների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումների կազմակերպումը, ավանդական-ազգային ծեսերի վերականգնումը և տարածումը,

9) Համայնքում բնապահպանական, սոցիալական պաշտպանության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների, անհատ բարերարների, հիմնադրամների և այլ կառույցների գործունեությանն աջակցումը,

10) Տեղական ինքնակառավարման մեջ համայնքային նշանակություն ունեցող հարցերի քննարկման և խնդիրների լուծման գործընթացում բնակիչների դերի ակտիվացումը,
11) Արտակարգ իրավիճակներից տուժած անձի և ընտանիքի համար կյանքի և առողջության համար վտանգ չսպառնացող միջավայրի ստեղծում, տեղափոխում, առաջնային կարիքների բավարարումը,
12) Համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
13) Միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև այլ համայնքների կողմից հիմնված միավորումներին անդամակցումը,
3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.
1) աջակցում է աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործընթացին,
2) միջոցներ է ձեռնարկում Զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների և այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված համայնքում փաստացի բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման սոցիալական աջակցության տրամադրման ուղղությամբ՝ ներառյալ Սոցիալական աջակցության մասին օրենքով սահմանված սոցիալական ծառայությունների տրամադրումը, բացառությամբ դրամական աջակցության,
3) միջոցներ է ձեռնարկում ոչ հիմնական շինություններում և ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց և ընտանիքներին աջակցելու ուղղությամբ,
4) միջոցներ է ձեռնարկում Համայնքում արհեստների, ժողովրդական ստեղծագործությունների և գեղարվեստական ինքնագործունեության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման ուղղությամբ,
5) աջակցություն է ցուցաբերում Համայնքի տարածքում գործող հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների աշխատանքի կազմակերպման ուղղությամբ,
6) աջակցություն է ցուցաբերում համայնքի մարզիկներին և մարզական թիմերին՝ ներհամայնքային մարզական միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև միջհամայնքային, մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերին նրանց մասնակցության ուղղությամբ,
7) միջոցներ է ձեռնարկում Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական, մարդկային, զբոսաշրջային-ռեկրեցիոն ռեսուրսների մասին տեղեկատվության հաշվառման, դասակարգման, տարածման և հանրահռչակման ուղղությամբ,

8) միջոցներ է ձեռնարկում ավանդական-ազգային ծեսերի վերականգնման և տարածման, տոների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումների կազմակերպման ուղղությամբ,
9) համայնքում առկա բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծման նպատակով համագործակցում է համայնքում առկա բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծմանը նպաստող հասարակական կազմակերպությունների, անհատ բարերարների, հիմնադրամների և այլ կառույցների հետ,
10) նպաստում է Տեղական ինքնակառավարման մեջ համայնքային նշանակություն ունեցող հարցերի քննարկման և խնդիրների լուծման գործընթացում բնակիչների դերի ակտիվացմանը,
11) միջոցներ է ձեռնարկում Արտակարգ իրավիճակներից տուժած անձի և ընտանիքի համար կյանքի և առողջության համար վտանգ չսպառնացող միջավայրի ստեղծման, տեղափոխման, առաջնային կարիքների բավարարման ուղղությամբ,
12) միջոցներ է ձեռնարկում համայքնում երիտասարդական խնդիրների լուծման ուղղությամբ
13) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով ստեղծում է միջհամայնքային միավորումներ, ինչպես նաև անդամակցում է համայնքների հիմնադրած միություններին:
4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով կարող են նախատեսվել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 5 %-ը:
5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ ավագանու կողմից հաստատված բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Համայնքի ղեկավարը եռամսյակային կտրվածքով ավագանուն է ներկայացնում հաշվետվություն /հաղորդում/ տրամադրված աջակցությունների վերաբերյալ:
6. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:
7. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:
8. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմը, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:
9. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝

նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են, բացառությամբ սոցիալական աջակցության մասին կամավոր խնդիրների լուծման, որն իրականացվում է բնակչի դիմումի կամ վարչական ղեկավարի զեկուցագրի կամ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա՝ քննարկվելով համայնքի ղեկավարի կողմից հիմնված համապատասխան հանձնաժողովի կողմից:

10. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են աշխատակազմը, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում կամ զեկուցագիր՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

11. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 9-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև ուսումնասիրում է կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և կայացնում է համապատասխան որոշում.

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

12. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու կամ համաձայնելու մասին գրավոր պատասխան կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը կարող է ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

13. Համայնքի ղեկավարը զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած, արտակարգ իրավիճակների տուժած և օբեկտիվ և սուբեկտիվ այլ

պատճառներով սոցիալապես անապահով վիճակում հայտնված անձանց ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման և սոցիալական աջակցության վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ /առկայության դեպքում/, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. 13-րդ կետում նշված դեպքերում տրամադրվող սոցիալական աջակցությունը ենթադրում է.

1) բնաիրային օգնություն՝ մասնավորապես սննդի և հիգիենայի փաթեթի ձեռքբերման քարտ՝ մինչև 40.000 դրամ արժողությամբ, որն իրենից ենթադրում է ցանկացած տեսակի սնունդ և հիգիենայի պարագաներ՝ բացառությամբ ալկոհոլային խմիչքների, ծխախոտի, սուր կտրող-ծակող գործիքների,

2) դեղորայքի ձեռքբերման քարտ՝ մինչ 40.000 դրամ արժողությամբ՝ բացառությամբ հղիության արհեստական ընդհատման և հոգեմետ դեղորայքի,

3) շինանյութի և/կամ կենցաղային պարագաների ձեռքբերման քարտ՝ մինչև 50.000 դրամ արժողությամբ,

4) հրատապ բժշկական միջամտության անհրաժեշտության դեպքում բուժման ծախսերի փոխհատուցում տվյալ բժշկական կազմակերպությանը մինչև 50.000 դրամի չափով,

5) տիրազուրկ կամ հոգեկան առողջության խնդիրներ կամ հատուկ խնամքի կարիք ունեցող կամ գտնվելու վայրը անհայտ ժառանգներ և/կամ ընտանիքի անդամներ ունեցող անձի մահվան դեպքում թաղման ծախսերի փոխհատուցում մինչև 100.000 դրամի չափով,

15. սոցիալական աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում,

2) Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:

16. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է սոցիալական աջակցության համար դիմողի, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ նրա օրինական ներկայացուցչի կամ ներկայացուցչի դիմումի /այդ թվում՝ առցանց/, վարչական ղեկավարի զեկուցագրի կամ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա:

17. Սոցիալական աջակցության մասին դիմումին կից փաստաթղթերի ցանկը, գործող մշտական հանձնաժողովի ստեղծման, դրական եզրակացության տրման կարգը և սոցիալական աջակցությունների տրամադրման չափորոշիչները սահմանվում են «Լոռի Բերդ համայնքում սոցիալական աջակցությունների տրամադրման չափորոշիչներ»-ի մասին Լոռի Բերդ համայնքի ավագանու թիվ -Լ որոշմամբ:

18. Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց ընտանիքի անդամներին:

19. Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել 1 անգամ:

20. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

21. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե՝ համայնքի ղեկավարի անձնական միջոցներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

22. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում եմ միայն ավագանու որոշմամբ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №26-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 76-Լ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 12-ի թիվ 76-Լ որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			

Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

Հավելված
Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 11-ի
թիվ 26-Լ որոշման

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Լոռի Բերդ համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալական պաշտպանության ոլորտում համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, ծառայություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման չափորոշիչները, դրանց համապատասխան գնահատման միավորները և ընտանիքի գնահատման թերթիկի ձևը, դիմումին կից փաստաթղթերի ցանկը:

Ի. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանուց՝ մինչև երեք անդամ,

3) սոցիալական աշխատողներից՝ մեկ անդամ,

4) համայնքապետարանի աշխատակազմից՝ մինչև երեք անդամ,

5) համայնքային ենթակայության կազմակերպություններից՝ մինչև երեք անդամ,

6)համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից՝ մինչև երկու անդամ /առկայության դեպքում/,

7) համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչներից՝ մինչև երկու անդամ /առկայության դեպքում/

8) համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ մինչև երկու անդամ /առկայության դեպքում:

4. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

5. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում, Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

7. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

8. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից (1) մեկ տարի ժամկետով:

9. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (սոցիալական աշխատողի բացակայության դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկված համայնքապետարանի աշխատակիցներից մեկը):

10. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան և նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի մասին: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

11. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

12. Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ և կազմված եզրակացությունները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)

13. Հանձնաժողովի գործունեությունը ուղղված է ընտանիքների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների

նդլայնմանը, աջակցմանը, ռիսկերի կառավարմանը՝ դրանց կարգավորման ու նվազեցմանը: Հանձնաժողովը, համախմբելով տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և տարածքային կառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ մատուցողներին, սոցիալական ծառայություններից օգտվողներին, քաղաքացիական հասարակության դերակատարներին, աջակցում է համայնքի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական ներառմանն ուղղված մասնակցային գործընթացներին:

14. Հանձնաժողովը կարող է իրականացնել միջոցառումներ և գործառույթներ, որոնք ուղղված են՝

1) համայնքի կարիքների հիման վրա՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացին.
2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների մշակմանը, առաջարկությունների ներկայացմանը, համայնքում սոցիալական աջակցության տրամադրման բարենպաստ միջավայրի ստեղծմանը.
3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն ուղղված ծառայությունների մշակմանը, կարգավորմանը.
4) մասնակցել թիրախ բնակավայրերում կարիքների գնահատման մեթոդաբանության քննարկմանը, մշակմանը, օժանդակել կարիքների գնահատման համար տեղեկատվության փոխանակմանը (խնդիրների) ռիսկերի բացահայտմանը, ուղղորդմանը.
5) մասնակցել համայնքային հանդիպումներին, քննարկումներին, տեղեկատվական միջոցառումներին.
6) նպաստել սոցիալական նշանակության ծրագրերի հասանելիության, հասցեականության և տեսանելիության բարձրացմանը.
7) աջակցել տեղական սոցիալական ծրագրերի կանոնավոր և պարբերական մոնիտորինգներին.
8) նպաստել համայնքում մատուցվող սոցիալական աջակցության ծառայությունների կայունությանը,
9) օժանդակել մշակված տեղական սոցիալական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտման աշխատանքներին.
10) մասնակցել և (կամ) ցուցաբերել խորհրդատվական աջակցություն համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորմանն ու մատուցմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի առաջարկների գնահատման և ընտրության գործընթացներին:

III. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում,

2) Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:

16. Դիմումը ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ, հետևյալ եղանակով.

1) անձամբ՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝

2) փոստով՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝

3) էլեկտրոնային՝ դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով կամ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը):

18. Դիմումին կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը.

2) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին և հարկային պարտավորությունների վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում)

3) անձի կարգավիճակը հավաստող փաստաթղթերի պաճեն (բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի որոշում, վճիռ և այլն՝ առկայության դեպքում)

4) առողջապահական կարիքների բավարարման դիմումի դեպքում փաթեթի մեջ ներառվում է նաև՝ առողջական վիճակը հավաստող փաստաթղթի, նշանակված դեղորայքային բուժումը հավաստող փաստաղթի պատճենը, անհետաձգելի բժշկական միջամտության դեպքում՝ բուժհաստատության հարկային հաշիվը, անհրաժեշտ միջամտության ֆինանսական չափը,

5) դիմումին կարող են կցվել նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող այլ փաստաթղթեր (դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ընտանիքի անդամի կորստի, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնասի, առանց ծնողական խնամքի մնալու, զոհված զինծառայողի, վետերանի, ռազմական գործողության

արդյունքում անհայտ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողի կամ քաղաքացիական անձի ընտանիքի անդամ, փախստական լինելու փաստը հավաստող փաստաթղթեր և այլ), ինչպես նաև իրավիճակային բնույթի տեղեկանքներ՝ ըստ անհրաժեշտության

8) փոստային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի պատճենները.

9) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

19. Դիմումները համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո հանձնարարվում են համապատասխան աշխատակցին՝ տնային այցելություն և կարիքների գնահատում իրականացնելու համար:

20. Կարիքի գնահատում իրականացվելուց հետո դիմումը ներկայացվում է հանձնաժողովի քննարկմանը, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:

21. Հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացությունը հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացվում է համայնքի ղեկավարին, ինչից հետո համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում: Հանձնաժողովի տված բացասական եզրակացության դեպքում դիմումատուն գրավոր տեղեկացվում է:

22. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

23. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

24. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

25. Տիրազուրկ կամ հոգեկան առողջության խնդիրներ կամ հատուկ խնամքի կարիք ունեցող կամ գտնվելու վայրը անհայտ ժառանգներ և/կամ ընտանիքի անդամներ ունեցող անձի մահվան դեպքում թաղման ծախսերի փոխհատուցում իրականացնելու նպատակով համայնքի ղեկավարի որոշում կայացվում է արագացված ընթացակարգով առանց Հանձնաժողովի նիստի գումարման՝ վարչական ղեկավարի զեկուցագրի կամ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա՝ կցելով անձի տիրազուրկ կամ հոգեկան առողջության խնդիրներ կամ հատուկ խնամքի կարիք ունեցող կամ գտնվելու վայրը անհայտ ժառանգներ և/կամ ընտանիքի անդամներ ունեցող լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր, թաղման ծառայություններ մատուցող հաստատության հարկային հաշիվը, ծառայության համար անհրաժեշտ ֆինանսական չափը:

IV. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

26. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,

2) միայնակ մայր - 1 միավոր,

3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,

4) բազմազավակ՝

ա. չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք -1 միավոր,

բ. վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիք – 2 միավոր,

5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք 2 միավոր,

6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք- 2 միավոր

7) հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիք -2 միավոր

8) տնակ կացարանում կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 2 միավոր

9) վարձով բնակվող ընտանիք - 1 միավոր

10) դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր

11) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք- 2 միավոր,

12) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) ունեցող ընտանիք-3 միավոր

13) հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձ ունեցող ընտանիք – 2 միավոր

14) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր

15) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք-2 միավոր.

16) կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք-3

17) առանց ծնողական խնամքի մնացած երեխա ունեցող ընտանիք-3 միավոր

18)խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք -3 միավոր

29) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) ընտանիք-4

20) անբարենպաստ այլ պայմաններ- 1-ից 4 միավոր (հիմնավորում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով)

27. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 4 միավոր ստանալու դեպքում:

28. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեում հաշվառված, մշտապես բնակվող համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

29. Աջակցության տրամադրման նախապայման է սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրա կատարումը կարող է խորացնել ընտանիքի կյանքի դժվարին իրավիճակը:

V. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

30. Հանձնաժողովի նիստի ավարտին քարտուղարի կողմից կազմվում է նիստի արձանագրություն և եզրակացություն, որն ստորագրվում է հանձնաժողովի նստին ներկա բոլոր անդամների կողմից:

31. Արձանագրության ամբողջական փաթեթը ներառում է՝

1) դիմումը կամ զեկուցագիրը կամ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացությունը.

2) դիմումին կից փաստաղթերի ամբողջական փաթեթը (ձև 1).

3) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև 2) ՝ լրացված և ստորագրված տունայց կատարած մասնագետի կողմից.

32. Արձանագրության փաթեթի էջերը համարակալվում, թելակարվում և ստորագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից, կնիքվում համայնքի ղեկավարի կնիքով:

33. Եզրակացության փաթեթը ներառում է՝

1) աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի որոշումը.

2) հավելվածը /առկայության դեպքում/

34. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է:

35. Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ գործերը պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման կրիչների միջոցով:

Ձև 1

ՀՀ.....մարզի

.....համայնքի

Ղեկավար .....ին

Հասցե .....

.....բնակիչ

Անուն, ազգանուն .....

.....ից

Հեռախոս .....

Էլ. Փոստ .....

Դ Ի Մ ՈՒ Մ

Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին

Հանդիսանում եմ ..... համայնքի բնակիչ: Գտնվում եմ սոցիալական ծանր պայմաններում, կյանքի դժվարին իրավիճակում:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Դիմումին կցվող փաստաթղթերի ցանկ

№	Փաստաթղթի անվանումը	Կցված է (կատարվում է✓ նշում)
1.	Դիմում՝ լրացված սահմանված ձևով	
2.	Անձը հավաստող փաստաթղթի պատճենը	
3.	Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը	
4.	Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին	
5.	Տեղեկանք՝ հարկային պարտավորությունների մասին	
6.	Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննական որոշման պատճենը	
7.	Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ ամբուլատոր քարտից քաղվածք կամ դեղատոմս	
8.	Հաշիվ-ապրանքագիր ուսումնական հաստատությունից	
9.	Այլ	

Ստորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:

Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

□էլեկտրոնային փոստի միջոցով

□ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով

□պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ ---------- ----------

(ստորագրություն) (դիմումատուի անուն, ազգանուն)

----- ---------- 20 թ.

Ձև 2

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք

«———»----------20——թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն ----------

Հասցե----------

Հեռախոս----------

Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

Անուն, ազգանուն, հայրանուն	Կարգավիճակ	Ծննդյան օր, ամիս, տարի

Ընտանիքի իրավիճակը

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	

Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով ապահովվածություն	
Եկամուտներ	
Հագուստով ապահովվածություն	
Սննդով ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	

Ընտանիքի սոցիալական կապերը

Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք	
տվյալներ	կարգավիճակ

Լրացուցիչ տեղեկատվություն

Մասնագետի դիտարկումներ

Լուսանկարների առկայություն (անհրաժեշտության դեպքում)

☐

Աշխատանքային խմբի անդամների տորագրությունները

Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

N	Չափորոշիչը	Չափորոշիչի համար սահմանված միավորը	Ընտանիքի ստացած միավորը
1	Նպաստառու ընտանիք	1	
2	Միայնակ մայր	1	
3	Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա	1	
4	Բազմազավակ՝ չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող) ընտանիք	1 2	
5	Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)	2	
6	1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք	2	
7	Հաշմանդամ երեխաի ընտանիք	2	
8	Տնակ կացարանու կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք	2	
9	Վարձով բնակվող ընտանիք	1	
10	Դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետից տուժած) ընտանիք	3	
11	Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի ան դամի մահվան դեպք	2	
12	Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) անձի ընտանիք	3	
13	Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք	2	
14	Միայնակ չաշխատող թոշակառու	2	
15	Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք	2	
16	Կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք	3	
17	Մինչև 23 տարեկան ուսնող ունեցող ընտանիք՝	2	
18	Երկողմանի ծնողազուրկի (ԱԾԽՍ) երեխա ունեցող ընտանիք	3	
19	Խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք	3	

20	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն և այլն) անձի ընտանիք	4	
21	Այլ անբարենպաստ պայմաններ	1-4	
	Ընդամենը		

Աշխատանքային խմբի անդամների ստորագրությունները

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 76-Լ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լոռի Բերդ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորումների համատեքստում: Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 14-ի թիվ 76-Լ որոշումը, որով սահմանված է սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները: Այս որոշումը ուժը կորցրած ճանաչելու իրավական անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն հիմնավորման առարկա հանդիսացող նախագծով, սահմանվում են Լոռի Բերդ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները, որում ըստ էության ներառված են նաև սոցիալական աջակցության կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 12-րդ հոդվածների կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական պաշտպանությունը դիտարկում է, որպես համայնքի պարտադիր խնդիր, իսկ սոցիալական աջակցության տրամադրումը, որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար օրենսդրական իմպերատիվ պահանջ է սահմանել, որ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների, դրանցից բխող սոցիալական ծառայությունների տրամադրումը պետք է իրականացվի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

Սույն որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը նրանում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով արված փոփոխությունների արդյունքում նախատեսվել է, որ համայնքի ղեկավարը օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է տրամադրել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ծառայությունները, բացառությամբ նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին 8-րդ կետով նշված

օրենսդրությամբ սահմանված նպաստների և այլ դրամական օգնության նշանակման և վճարման, ուստի առաջանում է անհրաժեշտություն առկա սոցիալական ծառայությունների բնույթը հստակեցնելու և նոր չափորոշիչների սահմանման:

Բացի օրենսդրական պահանջի իրագործման անհրաժեշտությունից, առկա է նաև իրավակիրառական անհրաժեշտություն և նպատակահարմարություն, համայնքային մակարդակում կարգավորելու համայնքի բյուջետային միջոցների հաշվին սոցիալական աջակցություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները, սահմանելով այդ իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը միտված ընթացակարգերը և ենթաօրենսդրական կառուցակարգերը: Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում, առաջարկվում է սահմանել այն չափորոշիչները և ընթացակարգերը, որոնց համաձայն կիրականացվի համայնքում սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը, միաժամանակ, նկարագրվել են սոցիալական ծառայությունները տրամադրող հանձնաժողովի գործառույթները, որոնք թույլ են տալիս վերջինիս, որպես տեղական կամ համայնքային դերակատար, իր մասնակցությունը բերի համայնքային մակարդակում մշակվող և վարվող տեղական սոցիալական քաղաքականության, տեղական սոցիալական ծրագրերի և այլ ծրագրերի իրականացմանը:

Նախագծի ընդունման արդյունքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, կարող է իրականացվել ենթաօրենսդրական իրավական կարգավորումների համատեքստում, ինչը հնարավորություն կընձեռի թե՛ համայնքի ղեկավարի և թե՛ համայնքապետարանի աշխատակազմի պաշտոնատար անձանց համար, գործելու բացառապես իրենց վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակներում, ապահովելով սոցիալական աջակցության տրամադրման գործընթացներում օրինականության պահպանումը:

Նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի, համայնքային մակարդակում խրախուսելու և բարելավվելու սոցիալական ծառայությունների ուղղությամբ իրականացվող և իրականացվելիք ծրագրերը, հիմքեր և նախադրյալներ ստեղծելով այս բնագավառում ծրագրային գործողություններ իրականացնելու համար:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Կատարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեում հետևյալ փոփոխությունները համաձայն՝ 1-ից 5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			
Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №28-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից;

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			

Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

Հավելված 1
Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 11-ի
թիվ 28- Լ որոշման

ԿԱՐԳ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Լոռի Բերդ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:

2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Լոռի Բերդ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:

3.Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:

4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):

5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:

6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:

7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.

9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.

11) 11-րդ սյունակում գրառվում են՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.

12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով << ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական

ոարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.

19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

Հավելված 2
Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 11-ի
թիվ - Լ որոշման

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

ՍԿՍՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

Հավաքի անցկացման ներկայացված իրազեկման և հավաքի վերաբերյալ տեղեկություններ

N Հ/հ	Հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազ-մում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Իրազեկումը ներկայացնելու ձևը	Հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները	Հավաքի տեսակը	Հավաքի վայրը	Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը	Հավաքի նպատակը	Մասնակիցների սպասվող թիվը	Երթի ուղին և ժամանակացույցը	Լրացուցիչ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2										
3										
4										
5										

Հավաքի անցկացման մասին հանրությանը տեղեկացնելու և պետական մարմիններից հավաքի անցկացման վերաբերյալ ստացված կարծիքների մասին տեղեկություններ

Ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը
12	13	14	15	16	17	18	19

Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման վերաբերյալ տեղեկություններ							
Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը, օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը բողոքարկվել է դատական կարգով	Դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը
20	21	22	23	24	25	26	27

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝ _____ _____ էջից:
(թվով) (տառերով)

Գրանցամատյանը կազմվել է՝ _____:
(օրը, ամիսը, տարին)

Համայնքի աշխատակազմի

քարտուղար՝ _____

Կ.Տ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Օրինակելի ձև

_____
(օրը, ամիսը, տարին)

_____ համայնքի ղեկավար _____
(համայնքի անվանումը) (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

ՀՀ քաղաքացի _____ - ից
(անունը,հայրանունը, ազգանունը)

Բնակության և ծանուցման հասցե՝ _____:

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի (պարոն, տիկին) _____
(համայնքի ղեկավարի ազգանունը)

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. Հավաքի վայրը՝ _____

2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ _____

3. Հավաքի նպատակը՝ _____

4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ _____

5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ _____
_____
_____:

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ _____ մարդ:

7. Հավաքի ընթացքում (ժամը __00-__00) նախատեսվում է երթ՝ _____
(նշել երթուղին)

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝

Ազգանուն, անուն, հայրանուն՝

_____,

Անձնագիր՝_____, տրված __.__.20__, ___-ի կողմից, Հեռախոս՝ _____, Փոստային հասցե՝ ____ ՀՀ, _____, Էլեկտրոնային հասցե՝ _____:

9. Հավաքի ղեկավարի տվյալները՝ (լրացնել եթե հավաքի ղեկավարումը հանձնարարվել է այլ անձի)

Ազգանուն, անուն, հայրանուն՝

_____,

Անձնագիր՝ _____, տրված __.__.20__, ____-ի կողմից, Հեռախոս՝ _____ Փոստային հասցե՝ ____ ՀՀ, _____ Էլեկտրոնային հասցե՝ _____:

Խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը:

2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով:

Առդիր՝ հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը՝ -- թերթ:

Հավաքի կազմակերպիչ՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լոռի Բերդ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող «Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կարգավորումների համատեքստում:

Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.

«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:

Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.

Նախագիծը կրում է ներքին **(լոկալ)** բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք ակտն ընդունող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, և ուղղված է համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելուն: Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №29Ա

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի հ. 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով ս.թ. մարտի 03-ին Կողես բնակավայրում կայացած հանրային լսման արդյունքները՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում «Գրանարմ» ՍՊ ընկերության կողմից երկրաբանական հետախուզական աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:
2. Առաջարկել Լոռի Բերդ համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը և լուսանկարները օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			

Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Անանա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.
2025թ. ապրիլի 11
գ. Լոռի Բերդ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԵՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ԳՐԱՆԱՐՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

30.01.2025թ. Լոռի Բերդի համայնքապետարան (գրանցման համար մտից 121-25) մուտք է եղել «ԳՐԱՆԱՐՄ» ՍՊ ընկերության դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում՝ մոտ 4.5 հա մակերեսով տեղամասում երկրաբանական հետախուզական աշխատանքների իրականացման նպատակով՝ նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսում կազմակերպելու մասին:

Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և Հայաստանի Հանրապետության կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ կատարվել է շահագրգիռ հանրության ծանուցում, նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ծանուցումն օրենքով սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթում, տեղադրվել է Լոռի Բերդի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայքէջում և համայնքի ֆեյսբուքյան հարթակում:

Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում «ԳՐԱՆԱՐՄ» ՍՊ ընկերության կողմից Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում երկրաբանական հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ նախատեսվող գործունեության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ՝ ս.թ. մարտի 03-ին, ժամը՝ 12:00-ին Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում օրենքով սահմանված կարգով տեղի է ունեցել առաջին հանրային լսումը: Համայնքի կողմից ապահովվել է համայնքի ներկայացուցչի մասնակցությունը: Շահագրգիռ հանրության կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ չեն ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 27-րդ կետի համաձայն՝ հանրային լսումների պատասխանատուն, հանրային լսման արձանագրությունն ու լուսանկարները ներկայացրել է համայնքի ավագանուն և նախաձեռնողին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի՝ «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և

ժամկետները սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) սահմանվում է՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները՝ համայնքին առնչվող հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի ավագանու կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրումը: Որոշման 28-րդ կետով սահմանվում է. հանրային լսումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, համայնքի ավագանին որոշում է ընդունում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ, որը պետք է պարունակի հիմնավորումներ դրա պատճառների, այդ թվում՝ սույն Որոշման հավելվածի 8-րդ կետում նշված բացառությունների (առկայության դեպքում) մասին:

Որոշման հավելվածի 29-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ավագանու որոշման կայացման օրվանից հետո՝ 5-օրյա ժամկետում, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված դեպքում՝ համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, լիազոր մարմնին և նախաձեռնողին է տրամադրում համայնքի ավագանու որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները:

Հիմք ընդունելով վերը նշվածը, Լոռի Բերդ համայնքի ավագանու համաձայնեցմանն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում «Գրանարմ» ՍՊ ընկերության կողմից երկրաբանական հետախուզական աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու որոշման նախագիծը՝ հիմք հանդիսացող անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերով:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №30Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՎԵՐԴԼՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրում նոր հասցեավորում իրականացնելու նպատակով՝ կից ներկայացված հավելվածներում տեղանշված փողոցները համարակալել հետևյալ կերպ.

1) Լոռի Բերդ համայնք, գյուղ Սվերդլով, 16-րդ փողոց, /հավելված 1/:

2) Լոռի Բերդ համայնք, գյուղ Սվերդլով, 17-րդ փողոց, /հավելված 2/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			

Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ

Հավելված 1
Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 11-ի
թիվ 30 - Ա որոշման



ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

Հավելված 2
Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 11-ի
թիվ 30- Ա որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱՐԽԻՏԵԿՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ «06954163» ՎԵՍՊԵՍ ՎԱՍՊԵՍՅԱՆ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2025թ. №32Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2025 թվականի մայիսի 08-ը, ժամը՝ 12:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Սերոբյան Անի Սամվելի			
Գևորգյան Միշիկ Մարտիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

2025թ. ապրիլի 11

գ. Լոռի Բերդ